



Տեղի ունեցավ լավագույն հեքիաթների մրցանակաբաշխությունը



Երևանի կենդանաբանական այգին և «Բուկինիստ» գրախանութը երկու ամիս առաջ հայտարարեցին մի ուշագրավ նախաձեռնության մեկնարկի՝ «Հեքիաթի Մրցույթի» մասին: Մրցույթի պայմաններով՝ երեխաները պետք է հեքիաթներ գրեին կենդանիների մասին:

Այս կերպ Երևանի կենդանաբանական այգու և «Բուկինիստ» գրախանութի նպատակը մեկն էր. երեխաների մտավոր կարողությունների շնորհիվ հասնել սիրալիր վերաբերմունքի ու հոգատարության կենդանիների և շրջակա միջավայրի, ինչպես նաև գրքի նկատմամբ:

Մրցույթին մասնակցել էին 7-ից 14 տարեկան 30-ից ավելի երեխաներ: Հոկտեմբերի 19-ին «Բուկինիստ» գրախանութում տեղի ունեցավ սպասված մրցույթի մրցանակաբաշխությունը: Երեխաների կողմից ներկայացված բոլոր հեքիաթները տեղադրվել էին համապատասխան և ցանկացած այցելու կարող էր ընթերցել և քվեարկել իրեն դուր եկած հեքիաթի օգտին:

Բաց քվեարկության դրվելուց հետո, ժյուրիի կողմից ընտրվեցին 9 լավագույն հեքիաթները, որոնց հեղինակները ստացան խրախուսական նվերներ՝ գեղեցիկ և գունեղ հեքիաթների գրքեր, պատվոգրեր:



«Բուկինիստ» գրախանութի գովազդային բաժնի պատասխանատու Անի Ղազարյանն իր խոսքում նշեց, որ իրենց սպասելիքներն արդարացան, – «Ուրախալի էր, որ երեխաները հետաքրքրված էին հեքիաթներով և ոգևորված: Կային հեքիաթներ, որոնք իսկապես ինքնուրույն էին գրվել, առանց ծնողների միջամտության»:

Գլխավոր մրցանակի արժանացավ Նարե Ստեփանյանը, ով գրել էր գորշուկի և արջի մասին պատմող հեքիաթը և շատ ուրախ էր, որ արժանացավ գլխավոր մրցանակի, – «Շատ ուրախացա և հուզվեցի, որ լավագույն հեքիաթն իմն էր և ստացա հեծանիվ»:

8 ամյա Լիլիթ Վարդանյանը նույնպես մասնակցել էր հեքիաթի մրցույթին և իր հեքիաթն անվանել էր «Ճաղատ ոգևին»: Լիլիթի մայրը՝ Արմենուհի Ղազարյանը, հեքիաթի մրցույթի մասին տեղեկացել էր ֆեյսբուքյան էջից, – «Երեխաներն ոգևորվում են, սկսում են մտածել, գրքի նկատմամբ սեր է արթնանում, ընկերներ են ձեռք բերում, մրցանակներ ստանում»:

«Չալոյի» մասին պատմող հեքիաթի հեղինակի՝ 9 ամյա Վլադիմիր Կարոյանի մայրը՝ Արմինե Գալստյանը, պատմում է, որ Վլադիմիրն ինքնուրույն է գրել հեքիաթը և ուղարկել մրցույթին՝ «Կարծում եմ, որ երեխաները կենդանիների միջոցով պետք է կարողանան բարի դառնալ և սիրեն նրանց և շատ ողջունելի քայլ է՝ կենդանաբանական այգու կողմից նման մրցույթների կազմակերպելը»:

Հեքիաթային մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ «Հեքիաթի ժամ» ծրագրի շրջանակներում, որն արդեն մի քանի տարի է, ինչ իրականացվում է «Բուկինիստ» գրախանութում:

Ներկա էին երեխաների կողմից սիրված հերոսներ՝ Մաշան և Արջուկը: Իսկ լավագույն հեքիաթների հեղինակների համար ևս մեկ անակնկալ: Նրանց հեքիաթները կտպագրվեն Երևանի կենդանաբանական այգու «ՁՈՒ» մանկական ամսագրի առաջիկա համարներում:

Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը մասնակցեց EAZA-ի տարեկան գիտաժողովին



Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) աջակցության շնորհիվ արդեն երկրորդ տարին է, ինչ Երևանի կենդանաբանական այգին հնարավորություն է ունենում մասնակցելու EAZA-ի (Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի) տարեկան գիտաժողովին:

Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս Երևանի կենդանաբանական այգու համար ձեռք բերվեցին բազմաթիվ պայմանավորվածություններ:

Տարեկան գիտաժողովին Երևանի կենդանաբանական այգու տնօրենի կողմից ներկայացվել են 2012-2013 թվականների ձեռքբերումները, կատարված նոր շինարարական աշխատանքների հաշվետվությունները: Ձեռք են բերվել մի շարք կենդանաբանական այգիների հետ համատեղ պայմանավորվածություններ՝ կենդանիների նվիրաբերություններ և փոխանակումներ իրականացնելու:



Պայմանավորվածությունների շրջանակներում Լեհաստանի Չամոշ կենդանաբանական այգու տնօրենն այցելեց Երևանի կենդանաբանական այգի՝ մասնագիտական դասընթացներ անցկացրեց, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ազատավանդակների ձևավորման հարցում խորհուրդներ տվեց:

Նախատեսվում է նաև Իսրայելի Բիբլիական կենդանաբանական այգու տնօրենի այցը Երևանի կենդանաբանական այգի՝ մի քանի այլ մասնագետների հետ միասին:

Նշենք նաև, որ EAZA-ի ղեկավարության կողմից Երևանի կենդանաբանական այգուն պաշտոնական նախագրուշացում էր տրվել շուտափույթ կերպով լուծելու Երևանի կենդանաբանական այգու շրջակա արգելապատնեշների բացակայության հարցը, առանց որոնց ոչ մի EAZA-ի (Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի) թեկնածու անդամ կենդանաբանական այգի, իրավունք չունի որևէ գործունեություն իրականացնելու:

Նշվեց Երևանի կենդանաբանական այգու 72-ամյակն ու 6-րդ Համահայկական Նկարչական Օրը



Հոկտեմբերի 6-ին Երևանի կենդանաբանական այգում կրկնակի տոն էր: Երևանի կենդանաբանական այգին նշեց իր հիմնադրման 72-ամյակը, իսկ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (FPWC) իր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության հետ համատեղ իրականացրեց 6-րդ համահայկական նկարչական ամենամյա մրցույթ-նախագիծը:

Կենդանաբանական այգին իր տարեդարձին անակնկալ էր մատուցել փոքրիկ այցելուներին և այգու մուտքը մինչև 16 տարեկանների համար հայտարարել էր անվճար. «Արդեն երկրորդ տարին է, որ հոկտեմբեր ամիսը շատ ակտիվ ամիս է կենդանաբանական այգու համար, քանի որ Արևուրդի փառատոնի որոշ միջոցառումներ համատեղվում են այգու միջոցառումների հետ», – իր խոսքում նշում է Երևանի կենդանաբանական այգու տնօրեն՝ Ռուբեն Խաչատրյանը:

Հոկտեմբերի 6-ին, վաղ առավոտից կենդանաբանական այգին վերածվել էր բացօթյա արվեստանոցի և իրական հերոսների կողքին՝ փոքրիկները նկարում էին 3 թեմաների շուրջ. Իմ երագած կենդանաբանական այգին, Ես հովազ եմ, Հայաստանի լճերն ու գետերը: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը կրկին հանդես եկավ իր տաղավարով, որտեղ ներկայացավ խաղ-մրցույթով: 10-ամյա Արման Շարաֆյանն արժանացավ գլխավոր մրցանակի՝ հեծանիվի: Բացի այդ, կենդանաբանական այգում տեղի ունեցավ մանկական համերգ՝ տարբեր խմբերի մասնակցությամբ, – «Ես շատ ուրախ եմ, որ կենդանաբանական այգին նոր շունչ է ստացել, ակնհայտ են դրական բարեփոխումները, իր խոսքում նշում է այցելուներից մեկի՝ Վարդայան Հասմիկի մայրը, ով երեխաներից ոչ պակաս ոգևորված էր այգում ստեղծված տոնական տրամադրությունից:



Հիշեցնենք, որ նկարչական օրը մեկնարկել էր 2013-ի օգոստոսի 20-ին և կավարտվի նոյեմբերի 30-ին: Մրցույթին կարող են մասնակցել 5-ից 16 տարեկան երեխաները: Նկարչական մրցույթին մասնակցության մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել www.paintingday.sunchild.org պաշտոնական կայք էջ:

Երևանի կենդանաբանական այգին կունենա եվրոպական չափորոշիչների համապատասխան բուժկետ



2014 թվականին Երևանի կենդանաբանական այգում կգործարկվի հիմնադրված բուժկետը, որում ընդգրկված կլինեն նաև լաբորատոր հետազոտությունների և կլինիկական միջամտությունների բաժանմունքներ:

Երևանի կենդանաբանական այգու բուժկետի անմիջապես վիճակը եղել և շարունակում է մնալ այգու հիմնական խնդիրներից մեկը, խնդիր, որի տարբեր դրսևորումներին այգու անասնաբույժն ու մյուս աշխատակիցներն առնչվում են գրեթե ամեն օր:

Գործարկման համար ոչ բավարար պայմաններում գտնվող բուժկետն անհապաղ վերանորոգելն ու անհրաժեշտ սարքավորումներով հագեցնելը խիստ ծախսատար աշխատանք են: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ դեռևս 2 տարի առաջ Հիմնադրամը (FPWC) դիմել էր Հայաստանի բժշկական տարբեր կենտրոններին՝ խնդրելով այգու բուժկետին տրամադրել գործածությունից դուրս եկած և կամ արդեն չօգտագործվող բժշկական սարքավորումները, սակայն բուժհիմնարկներից և ոչ մեկն այդպես էլ չարձագանքեց:



Փոխարենը՝ օգնեց հոլանդական Ռենե քաղաքում տեղակայված մասնավոր կենդանաբանական այգին և դրա շրջանակում գործող «Ալերտիս» հիմնադրամը, ինչպես նաև «Արտիս» թագավորական կենդանաբանական այգին: Վերջիններս Երևանի կենդանաբանական այգուն տրամադրել են լաբորատոր հետազոտությունների և կլինիկական միջամտությունների համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները:

Նվիրատվության հիմնական մասը Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն արդեն իսկ տեղափոխել է Հայաստան, իսկ մյուս մասը այգի կտեղափոխվի առաջիկա տարվա ընթացքում: Այս պահին արդեն իսկ մեկնարկել են այգու բուժկետի հիմնադրված աշխատանքները: Տնօրեն Ռուբեն Խաչատրյանի խոսքերով՝ կենդանիների համար նախատեսված նոր կենտրոնը կգործարկվի 2014-ի առաջին կիսամյակում: